ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ
ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մարգարիտա ՄԻՆԱՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 24, 2025

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հորդորում է լրատվամիջոցներին՝ հարգել նախօրեին սպանված Փարաքար համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանի հարազատների վիշտը եւ զերծ մնալ այս օրերին նրա հարազատների տնից իրականացվող ռեպորտաժներից ու հարցազրույցներից:

Արդեն իսկ եղած նմանատիպ հրապարակումների շուրջ բավականին անառողջ մթնոլորտ է ձեւավորվել, որը վնաս է հասցնում լրագրողի մասնագիտական համբավին: Առանց մեդիայի էթիկական նորմերի հետ համապատասխանությանն առնչվող մանրամասների մեջ մտնելու՝ կոչ ենք անում հատկապես ԶԼՄ-ների Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած ու էթիկայի Կանոնագիրը ստորագրած «Ժողովուրդ» օրաթերթին եւ ArmLur.am կայքին՝ հեռացնել հրապարակված վերոհիշյալ տեսանյութերը եւ հնարավորինս կանխել դրանց տարածումը: